ՊԵՏՐՈՍ ՆԱԽԻՋԵՎԱՆՑԻՆ
ԵՎ XVIII ԴԱՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՎՈՂ ՀԱՅ ՀՈԳԵՎՈՐ ԵՐԳԸ

Բանասիր. գիտ. դոկտոր Շ. Լ. ՆԱԶԱՐՅԱՆ

Շուրջ երկու տասնյակ հատորներ են կազմում Պետրոս Նախիջևանցու հեղինակությամբ մեզ հասած ինքնուրույն և մեկնողական երկերը։ Դրանց մեծ մասն անտիպ է և ձեռագիր ընդօրինակություններով տարածվել է նաև մայր հայրենիքից դուրս, հայաշատ կենտրոնները, մինչև հեռավոր Հնդկաստան։ Միայն Մաշտոցի անվան Մատենադարանում պահվում են նրա երկերի 170 գրչագիր օրինակներ։ Նախիջևանցու ստեղծագործությունը, սակայն, ուսումնասիրված չէ։ Մեզ հայտնի չէ նրա բազմաբնույթ երկերին նվիրված հետազոտական աշխատություն։ Այսուամենայնիվ, Նախիջևանցին հայագիտությանն անծանոթ դեմք չէ. XVIII—XIX դդ. մի շարք նշանավոր գործիչներ խոր ակնածանքով են հիշում նրա անունը և բարձր են գնահատում նրա երկասիրությունները. «Եւ միայն զայս ևեթ ասեմ,— բնութագրում է Պետրոս Նախիջևանցուն XVIII դարի մատենագետ Թադեոս արքեպիսկոպոսը,— թէ ըստ բանի սրբոյն Դաւիթ Անյաղթ փիլիսոփային, զամենայն կենցաղական հոգս յետին վարկուցեալ, ողջախոհ իմն մոլութեամբ վարեալ բերէր զօրհանապազ ի յընթերցումն գրոց և յաշխատութիւնս գրութեանց զանազան բանից»[1]։ *Մեսրոպ Թաղիադյանը Հաղբատում ընդօրինակում է «մեծանուն մատենագիր, աւուրն պարենի կարօտ երանելոյն Պետրոսի» «զոսկեղէն մատեան Աստուածանմանութեան» երկը և 1827 թ. հրատարակում Կալկաթայում. «Զոր ընդունել ադաչեմ,— դիմում է նա ընթերցողներին,— իբրև հայելի և առաջնորդ հոգւոց ձերոց, զարդարել զձեզ առաքինավար գործովք բարութեան»[2]։ Բացառիկ դեր է վերապահում Պետրոս Նախիջևանցուն նաև Մսեր մագիստրոս Մսերյանցը. «Պետրոս եպիսկոպոս Բերդումեան ի Նախիջևանայ,— գրում է նա,— այր առատամիտ և լուսաւոր իմաստիւք, որում ոչ ոք գտաւ ցայսօր ի միաբանից էջմիածնի համեմատ ի հանդիսի շիայրդիւն մատենագրութեան և վարդապետական շնորհաց»։ Մսեր Մսերյանցը նշում է Նախիջևանցու 11 անուն*

---

1 *Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 6744, էջ 159ա։ Հեղինակը նկատի ունի Դավիթ Անյաղթի «Գիրք սահմանաց»-ի առաջին գլխի առաջին պարբերությունը. «Որք միանգամ իմաստասիրութեան տենչան բանից և առ ի նմանէ հեշտութեանց ծայրիւ միայն մատին հանդիպին ճաշակեալք ամենայն կենցաղական հոգոց բարեաւ մնալ ասացեալք, ողջախոհ իմն մոլութեամբ առ այսոսիկ վարեալք բերեն» (Դաւիթ Անյաղթ, Երկասիրութիւնք փիլիսոփայականք, համահավաք քննական բնագրերը և առաջաբանը Ս. Ս. Արևշատյանի, Երևան, 1980, էջ 29)։*

2 *Պետրոս Նախիջևանցի, Աստուածանմանութիւն, վերստին աշխատութեամբ Մեսրովպայ Դաւթեան Թաղիադեանց Կարբեցւոյ, Կալկաթա, 1827 (Նախադեկուցումն)։ «Երևեցույի ուրեք-ուրեք ի ծանօթաբանութեան իմում,— գրում է Թաղիադյանը,— ի գիրս «Աստուածանմանութեան» երանելոյն Պետրոսի Բերթումեցւոյ, զոր և բազում վշտօք տպագրեցի ի Նորակերտ տպարանի եպիսկոպոսական ճեմարանիս, արդեամբք բարեպաշտոն մեր ազանցն ի Հնդիկս» (Մեսրոպ Թաղիադյան, Ուղեգրություններ, հոդվածներ, նամակներ, վավերագրեր, Երևան, 1975, էջ 408)։*

գրքերի ցանկը և դառնացած նկատում. «Թող զայնոսիկ, յորոց ոմանք անհետացեալք չերևին ի միջի և բազումք (որպէս ասի) հրոյ ի կեր տուան ի թըշնամեաց և կէսք ի ներքնածրարս մշակապաշտօն աբեղայից կաշկանդեալ մնան»[3]։ «Անխոնջ և նուիրական մատանցն իւր ծնունդ,— գրում է Նախիջևանցու «Մեկնութիւն թղթոյն Պօղոսի առ Եփեսացիս» երկի մեզ անծանոթ հրատարակիչը,— գուցէ և հազուագիւտ իսկ ի տեսակին...» «...Զարմանաւոր նըրբատեսութիւն և խորախորհուրդ հանճար հեղինակիս շուրջ աստուածաբանական խնդրովք»[4]։ «Հռչակված էր իբրև գիտնական-աստվածաբան,— գրում է Լեոն,— և Էջմիածնի դպրոցի փառքն ու պարծանքն էր կազմում։ Սակայն կենսագրական տեղեկությունները,— շարունակում է Լեոն,— լուսավորչական եկեղեցու այդ աստղի մասին մենք չունենք»[5]։ Բարեբախտաբար Պետրոս Նախիջևանցու թողած գրական հարուստ ժառանգության առանձին էջերում, նրա երկերի ձեռագիր և տպագիր օրինակների հիշատակարաններում պահպանվել են տեղեկություններ, փաստեր, որոնց համադրության մեջ գծագրվում է նրա արդյունավոր կյանքի ուղին։ Ծնվել է XVIII դարի սկզբներին՝ Նախիջևանում։ Պարսկական արշավանքների ժամանակ, բռնակալ Թահմազ ղուլի խանի ավազակախմբերը քանդում, ավերում են Նախիջևանցու ծննդավայրը, սպանում, գերի վերցնում անզեն բնակիչներին։ Աստանդական Նախիջևանցիների մեծ մասը բնակություն է հաստատում «Եվրոպայի ծայրամասերում»։ «Հայրենեաց զրկել յոյժ դժուարին չիք»,— գրում է Նախիջևանցին և իբրև ականատես այդ ահեղ օրերի պատկերն է վերակերտում պատմակենսագրական իր «Ողբում».

Բայց վասն մեղաց մեր զանաղան,
Ի քաղաքէն մեր սեփական
Տարագրեցաք փախստական
Յծայր մասի եւրոպական։

Քանզի Թահմազ բռնաւորն այն,
Շահըն մասին Ասիական,
Քակեց զերկիրն արևելեան,
Զամէն արար փախստական[6]։

Պետրոս Նախիջևանցու ուսումնառության շրջանը, ըստ երևույթին, սկըսվում է ծննդավայրում, ուր նա անց է կացնում իր կյանքի քսան տարիները հոր՝ գիտնական-դաստիարակ Բերդում Աղամալյանի հոգացության ներքո.

Յոր զարգացայ ցրամ քսան,
Ձեռամբ հօր իմ ազնուական,
Կոչեալ Բերդում Աղամալեան,
Առաքինի և գիտնական։

---

3 Մսեր Մսերեանց, Պատմութիւն կաթողիկոսաց Էջմիածնի, Մոսկվա, 1876, էջ 259, 260։

4 Պետրոս Նախիջևանցի, Մեկնութիւն թղթոյն Պօղոսի առ Եփեսացիս, Երուսաղեմ, 1850, առաջաբան։

5 Լեո, Երկերի ժողովածու, հ. 3, Երևան, 1973, էջ 463։

6 Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 6744, էջ 40ա (այսուհետև կնշվի միայն ձեռագրի համարը)։

Որ ո՞չ միայն հայր մարմնական,
Այլ և ծնող իսկ հոգեկան,
Կրթէր վարուք բարոյական,
Մարզէր ի գիրս և շարական[7]։

Հավանաբար Պետրոս Նախիջևանցին իր գրական առաջին երկերը գրել է ծննդավայրում, ապա Պոլսում՝ տարագրության մեջ. «...նախքան զմտանելն իմ ի կրօնս, մինչ էի պանդխտացեալ ի Կոստանդնուպօլիս, ի կոչեցեալն Վայեոտէխան»[8]։ Պոլսից նա մեկնում է Ղրիմ և ծառայում Ս. Օգսենտի վանքում իբրև առաջնորդ։ Այստեղից տեղափոխվում է Էջմիածին, ուր և ապրում, աշխատում է մշտապես։ Սիմեոն Երևանցի կաթողիկոսի օրոք, Էջմիածնի կրթական-լուսավորական կյանքի շրջադարձային այդ տարիներին է տարածվում Պետրոս Նախիջևանցի գիտնական-բանաստեղծի հռչակը։ Նրա ստեղծագործական լայնահուն գործունեությանը զուգակցվում է նաև մանկավարժական աշխատանքը։ Նախիջևանցին դառնում է Էջմիածնի ժառանգավորաց դպրոցի սյուներից մեկը։ Վախճանվում է 1784 թ. և թաղվում Էջմիածնի Ս. Գայանեի վանքի ներքին բակում։

Պետրոս Նախիջևանցու գրչին պատկանող մեզ հայտնի երկերն են՝ «Քարոզգիրք տարեկան» (երկու հատոր), «Աստուածանմանութիւն» (տպագրված), «Տաղարան երկուք», «Աղօթական բանք ընդ աստուծոյ ի խորոց սրտէ սրտաբեկ զղջմամբ», «Մեկնութիւն վերլուծութեանցն Արիստոտէլի», «Տրամաբանութիւն», «Ասացուածք իմաստասիրաց», «Ի նկատմանց Արիստոտէլի արտահանմունք ինչ բաժանեալ երկու գլուխս ապացուցական ձեռնարկութեամբ, հաւաքաբանական ոճիւ», «Մեկնութիւն Գրոց ծննդեան», «Մեկնութիւն Յոբայ», «Մեկնութիւն Յայտնութեան Յովհաննու» (տպագրված), «Մեկնութիւն թղթոցն Պօղոսի առ Եփեսացիս» (տպագրված), «Աղբիւր բացեալ» (տպագրված) և այլն։ Ինքնուրույն և մեկնողական այս երկերը բազմատեսակ հարցեր են շոշափում, հարստացնում են մեր պատկերացումները հայ ժողովրդի, հայ եկեղեցու XVIII դարի պատմության, դավանաբանական պայքարի, հայ փիլիսոփայական մտքի զարգացման, հայ դպրոցի, մանկավարժության պատմության, բարոյագիտության, մասամբ նաև հայ բանագիտության, երաժշտագիտության և հատկապես բանաստեղծության վերաբերյալ։

Հեղինակի գիտական, փիլիսոփայական, աստվածաբանական և այլ երկասիրությունների ուսումնասիրությունը թողնելով համապատասխան մասնագետների, մենք այստեղ փորձում ենք ներկայացնել բանաստեղծի դիմանկարը։

Պետրոս Նախիջևանցին XVIII դարի հայոց կրոնաազգային բանաստեղծության նշանավոր դեմքերից մեկն է, հայ եկեղեցական, հոգևոր բանաստեղծության վերանորոգիչը XVIII դարում։ Էջմիածնի դպրոցի այդ «թագն ու պարծանքը» դարի նշանավոր բանաստեղծներ Պաղտասար Դպրի, Պետրոս Ղափանցու գաղափարակիցն է, բանաստեղծական դպրոցի մի ինքնատիպ և ուշագրավ դեմք, քնարական մի այլ անհատականություն։ Նախիջևանցին ունի առավել մեծ քանակությամբ բանաստեղծական երկեր, քան իր ժամանակակիցներից որևէ մեկը։ Նրա գրչին են պատկանում շուրջ 300 մեծ ու փոքր ծա-

7 Նույն տեղում, էջ 39բ։
8 Ձեռ. № 10, էջ 2բ։

վալի գրական ստեղծագործություններ՝ քնարական, պատմաքնարական պոեմներ, բանաստեղծություններ, երկտողյակներ, քառյակներ, ասույթներ (աֆորիզմներ)։ Այս երկերը հիմնականում ներառված են «Աղօթական բանք» և «Երգարան երկուք» խորագրերով ձեռագիր մատյաններում։ Բանաստեղծություններ կան նաև գրչագիր զանազան տաղարաններում, ինչպես նաև հեղինակի տպագրված գրքերի առանձին էջերում։ Նախիջևանցու բանաստեղծական ժառանգության մեջ զգալի թիվ են կազմում եկեղեցական, կանոնական և ոչ կանոնական երգերը՝ աղոթքներ, աղերսներ, տաղեր, շարականակերպ բանաստեղծություններ և այլ տիպի երգեր։ Դրանց մի մասը հորինված է եկեղեցու առօրյա ծեսերի, արարողությունների, ժողովրդականացած եկեղեցական տոների համար. «Հոգևոր և աղօթական տաղից և զանազան չափաբերական բանից, հիմնաւորութեամբ Աստուածաշունչ սուրբ գրոց...»[9] «Ըստ պատշաճի յաւուրց իւրաքանչիւր տօնից և ևս այլ ինչ-ինչ պատճառաւ...», «զհամառօտական սահման աղօթից կանոնականաց առհասարակ, ամենայն աշխարհականաց, արանց և կանանց, ծերոց և տղայոց, ուսանելի և ասելի յամենայն աւուրս»,— գրում է հեղինակը[10]։ Բանաստեղծը ունի նաև հայատառ թուրքերեն հոգևոր երգերի շարք՝ թրքախոս հայության համար։

Պատմական ի՞նչ անհրաժեշտություն կար եկեղեցական երգի վերանորոգության, հոգևոր կանոնական և ոչ կանոնական երգերի նորանոր շարքեր ստեղծելու։ Ինչո՞վ է պատճառաբանվում այդ երևույթը, ի՞նչ է ասում ինքը՝ հեղինակը այդ մասին։

Հայտնի է, որ հոգևոր երգ-բանաստեղծության նորանոր և ինքնատիպ շարքեր են ստեղծում ժամանակակից նշանավոր և ոչ նշանավոր բոլոր բանաստեղծները։ Դա հայ նոր և ընդհանուր վերանորոգության շարժմանը ուղեկից մի երևույթ էր, գաղափարական, ազգային նպատակադիր մի խնդիր, որ ուներ համահայկական մղում։ Կրոնական այդօրինակ երգ-բանաստեղծության նորանոր շարքեր էին ստեղծում դարի նշանավոր գործիչներ Մխիթար Սեբաստացին՝ Վենետիկում, Պաղտասար Դպիրը, Պետրոս Ղափանցին՝ Պոլսում, Ղազար Ճահկեցին, Սիմեոն Երևանցին՝ Էջմիածնում, Գրիգոր Շիրվանցին՝ Աստրախանում, Հակոբ Նալյանը՝ Երուսաղեմում, Գրիգոր Կոմպանյանը, Գևորգ Խուբովը՝ Մոսկվայում և այլք։ Ուշագրավ է, որ զարգացող հոգևոր երգի հեղինակներ էին ոչ միայն եկեղեցական նշանավոր գործիչները, այլ նաև աշխարհիկ բանաստեղծները, հայ ազգային-ազատագրական շարժման, ռուսական քաղաքական կողմնորոշման գործիչները։

XVIII դարի վերանորոգվող գրականության բաղկացուցիչ մասն է կազմում նաև ժամանակի գրաբարալեղու բանաստեղծությունը, ներառյալ վերանորոգվող հոգևոր երգը։ Գրականությունն իր հետ բերում էր նոր ոգի, նոր խոհեր. այդ ոգին կապում էր միմյանց հայ հասարակական տարբեր շերտերի գաղափարախոսներին, կրոնադավանաբանական ընդդիմադիր թևերին, լուսավորչական վանականությանը՝ կաթոլիկ վանականության հետ, ազգային-ազատագրական շարժման գործիչներին՝ եկեղեցական նշանավոր գործիչների. վաճառականների հետ։ Այդ ոգին էր կապում կրոնական առաջավոր երգն աշխարհիկ երգի հետ և ներկայացնում իբրև մի ամբողջություն։ Ինչպես արդեն

9 Ձեռ. № 6744, էջ 58ա։
10 Ձեռ. № 10, էջ 164ա։

նկատվել է, գրավոր, գրաբարալեզու բանաստեղծությունն ամբողջության մեջ, որն արտացոլում էր XVIII դարի հայ հասարակական-քաղաքական ու եկեղեցական բարդ իրականությունը, թելադրում էր նաև՝ վերանայել, վերակառուցել եկեղեցական կյանքը, բարձրացնել հայ եկեղեցու կրոնաքաղաքական, ազգային դեմքը, նրա գործնական, բարոյական կշիռը։ Դա անհրաժեշտ նախապայման էր օտար, բռնակալական լծի, մահմեդականության վտանգի դեմ կանգնելու, այդ լծի տակ տառապող հայ ժողովրդի գոյատևության ու ինքնահաստատման համար... Պատմական այս անհրաժեշտությունից ելնելով է, որ XVIII դարում վերոհիշյալ բանաստեղծները, այդ թվում նաև Պետրոս Նախիջևանցին, զարգացնում, վերակոչում են հոգևոր եկեղեցական երգ-բանաստեղծությունը. հետևաբար, XVIII դարի հոգևոր երգը չպետք է անուշադրության մատնել կամ անջատել աշխարհիկ երգից, դրանք պետք է գնահատել միասնաբար, իբրև մի ամբողջություն, իբրև ժամանակի բնականոն ծրնունդ. «...սուրբն Ներսես Շնորհալի, որ զարդարեաց զեկեղեցիս Հայաստանեայց սքանչելարուեստ տաղաչափական բանիւք իւրովք, որք յայտնի են ի միջի,— գրում է մեզ ծանոթ Թադեոս արքեպիսկոպոսը,— իսկ յետ նորա և այլ հոգելի երգարանից քան զնա յառաջ և յետոյ եղելոց. ի սոյն դարու ժամանակիս մերոյ քանիք-քանիք ծաղկեցան յեկեղեցական և յաշխարհական կարգաց, որք ընդ թիւ բանից շարադրութեանց, շարահիւսեցին և զներտաղական բանս, որոց մին և երևելին սոյն այս երգարանիս յօրինող Պետրոս արդիւնական վարդապետն և գերապանծ եպիսկոպոսն միաբան սրբոյն Էջմիածնի»[11]։

Իրապես, Պետրոս Նախիջևանցին միջնադարյան եկեղեցական երգ-բանաստեղծության լավագույն ավանդույթների վերակենդանացնողը եղավ XVIII դարում։ «Եւ մանաւանդ նախանձաւոր լեալ,— շարունակում է Թադեոս արքեպիսկոպոսը,— շնորհաց սրբոյն Գրիգորի Նարեկացւոյն և Ներսիսի Շնորհալւոյն, արար զգիրս աղօթից իբր համաշափ աղօթարանի Նարեկացւոյն և զսոյն գրքոյք ներտաղականաց ևս իբր հանգոյն Յիսուս Որդի գրոցն Շնորհալւոյն»[12]։

Խնդրի պատմական շարժառիթներին անդրադառնում է նաև ինքը՝ Նախիջևանցին։ Օրավուր, նկատում է նա, զորանում են անօրենների բռնությունները և օրավուր թուլանում է նաև հայ ժողովրդի մեջ սերը դեպի ազգային եկեղեցին, նրա ծեսերն ու սովորույթները, դեպի հայոց հին ու նոր երգերն ու շարականները։ «Առաւել ևս,—անկեղծորեն խոստովանում է բանաստեղծը,— զի տեսանելով իմ զմահմեդականս յօժարամիտ ի վճարել զաղօթս իւրեանց, վառեալ նախանձայուզութեամբ փառացն տեառն, հիւսեցի զայս համառօտագիծ աղօթս... զի սովիմբ բարձցէ զանաղօթութեան ախտն ի յրոտմկաց, որ է ազգի մերում»[13]։ Սա, անշուշտ, նախորդ դարերի հայոց կյանքի ընդհանուր անկման շարունակական արտահայտություններից մեկն էր։ Հայոց եկեղեցու ազդեցության թուլացման երկրորդ պատճառը, անօրենների բռնությունների հետ միասին, ժամասացության որոշ դժվարություններն էին։ Անցյալից մեզ հասած որոշ աղոթքներ, շատ ընդարձակ, երկարաշունչ լինելով, ձանձրույթ էին պատճառում և ասողներին, և մանավանդ լսողներին, հատկապես երիտասար-

11 Ձեռ. № 6744, էջ 158բ—159ա։
12 Նույն տեղում, էջ 159ա։
13 Ձեռ. № 10, էջ 164ա։

դությանը։ «Բայց նարդենիս առ զօրանալոյ անօրինաց, վասն ծովացեալ մեղաց մերոց,—գրում է Նախիջևանցին,—և ցամաքեցեալ գոլով սէր բազմաց... (բաց եկեղեցականաց), որք և ոչ գէթ զմին յաւուրն ի գլուխ հանեն, թող զկանայս, զուստերս և զդստերս, որք... չճանաչեն զստացիչն աստուած, և ոչ զսահման հաւատոց իւրեանց, ուր մնաց ուսումն կարգաց աղօթից, որք և ոչ գոնեա զտերունականն ունին ի բերան։ Վասն որոյ փոյթ յանձին կալեալ երիս համառօտ կարգս աղօթից բովանդակեմ... Զի գոնէ յայս երիս ժամս աղօթելով բացցին աչք մտաց նոցա...»[14]։

Պետրոս Նախիջևանցին, որպեսզի իր նոր, կարճառոտ աղոթքները, շարականակերպ տաղերը ասելի և լսելի դարձնի, որպեսզի ուժեղացնի ունկնդիրների հետաքրքրությունը դեպի եկեղեցին ու նրա արարողությունները, ժամանակի աշուղական և այլ երգերի գեղեցիկ եղանակները վերցնում, հարմարեցնում է իր առանձին աղոթքներին ու երգերին։ Բանաստեղծը դժգոհում է, որ «յախտաւոր» երգերը գեղգեղում էին այնպիսի քաղցրանվագ գունով, որ «ի սէր հրապուրեն» «զլրսօղսն ի մեղս». ուստի,— շարունակում է Նախիջևանցին, «մեծաւ նախանձայուզութեամբ փառացն աստուծոյ, զեղանակսն նոցին կորդեալ և վերացուցեալ իբր յանարժան ենթակայէ, եղանք ի վերա աստուածայնոցս երգոց»[15]։ Պետրոս Նախիջևանցու այս վկայությունը, անկախ հեղինակի միակողմանի հայեցողությունից, խոսում է ժամանակի մշակութային կյանքում գոյություն ունեցող ներքին սուր հակասությունների մասին, այն մասին, թե որքան ուժեղացել էր աշխարհիկ կյանքի հորձանքը և թե, իբրև չարյաց փոքրագույնը, որքան զարգանում էր հայատառ թուրքերեն երգը։ Հայտնի է, որ այս երևույթը շարունակում էր իր գոյությունը մինչև XIX դարը, որի դեմ այնքան վճռաբար պայքարում էր մեծանուն աշուղ Ջիվանին։ Այստեղ կա նաև մի նուրբ և կարևոր խնդիր։ Սոսկ հաճույքի, մարմնական ցանկությունների շեշտով հյուսված երգերի ծայրահեղ զարգացումը, հայ ժողովրդի իրավաքաղաքական բարդ հարաբերությունների մեջ ծանոթ պայմաններում, շեղում էր ժողովրդի, երիտասարդության ուշադրությունը բուն ազգային, կենսական, գաղափարական խնդիրներից, ազգի և եկեղեցու առջև ծառացած հարցերից։ Իրապես «առ զօրացեալ անօրինաց» և «ցամաքեալ գոլով սէր...» հիշատակությունները հայոց պատմաքաղաքական ծանր իրադրության վկայություններն են։ Այդ իրադրությունը, բնականաբար, անհանգստացնում էր ոչ միայն եկեղեցական մտավորականությանը, այլ նաև հայ հասարակական-քաղաքական մտքի բոլոր առաջադեմ գործիչներին, առևտրական, արհեստավորական դասերի, կրթված վաճառականության ներկայացուցիչներին, հայ ազգային-ազատագրական պայքարի մարդկանց։ Եթե իբրև դառն ճշմարտություն օրավուր մեծանում էր թրքախոս հայության զանգվածը, եթե, դեռևս հավատափոխության դաժան դատաստանից հրաժարվելու պատճառով, աճում էր նաև հայ հերոս-նահատակների թիվը, ապա հասկանալի է, որ գոյություն ուներ հայության ոչնչացման ահեղ ծրագիր և որ դա սոսկ կրոնական մոլեռանդության արգասիք չէր, այլ՝ սուլթանական Թուրքիայի կողմից հպատակ ազգերի ձուլման ծրագրային դատավճիռ։ Հետևաբար, XVIII դարի հայ հասարակական մտքի բոլոր հոսանքների, հայ կրոնական թե աշխարհական դասերի առաջադեմ

14 Նույն տեղում, էջ 164բ։
15 Ձեռ. № 6744, էջ 157ա։

ներկայացուցիչները, որքան էլ որ ներքին հակասությունների մեջ լինեին, պետք է միավորեին իրենց ուժերը այդ օրհասական վտանգի դեմ։ XVIII դարում կրոնական բանաստեղծության վերանորոգությունն ու զարգացումը, անա, պատմական այս իրողության արդյունքն է։ Գրական այդ շարժումը, որի առաջատարներից մեկն է Պետրոս Նախիջևանցին, ընդդիմադիր չէր ժամանակի հայ հասարակական մտքի շարժիչ ուժերի, հայ ազգային-լուսավորական դիմադրողական պայքարի գաղափարախոսությանը՝ լայն առումով։

XVIII դարի հոգևոր երգը վերափոխվում, աշխուժանում է հայության համար ստեղծված իրավաքաղաքական բարդ ու հակամետ հանգամանքներում, որոնց մասին խոսք եղավ վերևում։ «Միջին դարերի աշխարհայացքը,— գրում է Էնգելսը,— գերազանցապես աստվածաբանական է։ Եվրոպական աշխարհը փաստորեն զուրկ էր ներքին միասնությունից և քրիստոնեության միջոցով էր համախմբված ընդդեմ ընդհանուր արտաքին թշնամուն»[16]։ Այս խոր ընդհանրացումը վերաբերում է նաև հայոց անցյալին, ներառյալ XVIII դարը։ Պետականազուրկ, աշխարհացրիվ հայ ժողովրդին, ընդդեմ արտաքին թշնամու, օտար բռնակալական կարգերի, միավորում էր նաև հավատքը. դա ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի խթանիչ ուժերից, առանձնահատուկ միջոցներից մեկն էր։ Պատմական այս նույն հանգամանքների հրամայական պահանջով, ինչպես հայտնի է, հոգևորականությունը XVIII դարում դառնում է հայ հասարակական մտքի շարժիչ ուժերից մեկը։

Հայ ազգային-ազատագրական շարժման նշանավոր գործիչ և տեսաբան Հովսեփ Էմինի այն միտքը, թե «ես ծնվել եմ քրիստոնյա և պիտի մեռնեմ քրիստոնյա, եթե նույնիսկ ողջ աշխարհը մահմեդական դառնա»[17], հավատացյալի խոսք չէ, այլ քրիստոնյա հայ ժողովրդին ազնիվ, ազատագրական պայքարի մղելու կոչ՝ ընդդեմ «իսլամությունը սրով հաստատող» բռնակալական կարգերի։ Հովսեփ Էմինը, և առհասարակ գարի առաջադեմ մտավորականությունը, քննադատում են հայ եկեղեցուն, դատապարտում հոգևորականությանը, մերժում նրանց համատեղության, հաշտվողականության ոգին, բայց և չեն մերժում, չեն անտեսում հոգևորականության, հայ եկեղեցու դերը XVIII դարի հայ կյանքի թատերաբեմում։ Ազատասիրության գաղափարը Հովսեփ Էմինը պաշտպանում է նաև Քրիստոսի պատվիրանների նորիմաստ մեկնաբանությամբ։ Ըստ նրա՝ ազատությունը մարդու բնական իրավունքն է և պայմանավորվում է մարդկանց բաճական էակներ լինելու հանգամանքով[18]։ Հովսեփ Էմինն այն համոզմունքն ուներ, որ եթե հայ եկեղեցու բոլոր ծառաները վարվեին այնպես, ինչպես Վարդանանց պատերազմի նահատակները, Ղևոնդ Երեցը, կամ ինչպես նրա զինակիցը՝ Մշո Ս. Կարապետ վանքի վանահայր Հովհան վարդապետը, ապա հայ ժողովուրդը կթոթափեր իր վրայից ստրկության լուծը։ Գրեթե նույն գաղափարական հայացքն ունեն հայ եկեղեցու և հոգևորականության վերաբերյալ նաև Մովսես Բաղրամյանը և Շահամիր Շահամիրյանը։ «Նոր տետրակ, որ կոչի Յորդորակ» նշանավոր գրքի «Շնորհակալութիւն եկեղեցականաց», «Յաղագս անկման իշխանութեան հա-

16 Կ. Մարքս, Ֆ. Էնգելս, Երկեր, հ. 6, Երևան, 1958, էջ 298։

17 «Հովսեփ Էմինի կյանքն ու արկածները», Պեյրութ, 1958, էջ 299։

18 Տե՛ս Կ. Դանիելյան, Հայ մեմուարային գրականության պատմությունից, Երևան, 1967, էջ 104, 109։

յոց» գլուխներում հեղինակը, գնահատելով հայ եկեղեցու ծառայությունները, մեծարելով եկեղեցական հայրերին, բարեկամական դիրքերից քննադատում է նրանց, բացահայտում նրանց սխալներն ու թերությունները։ Մի՛ զանց անեք,— գրում է նա,— հայոց պետականության անկման բուն պատճառները, և մի՛ փորձեք ճակատագրով կամ աստծո կամքով բացատրել մեր հասարակական, բարոյական չարիքը։ Մեր թերությունների համար մեղավոր ենք մենք, «քանզի չարն անստեղծ է, և ո՛չ է էութիւն...», «զի աստուած ոչ է չարեաց պատճառ, այլ բարեաց»[19], հիշում է նա Դավիթ Անհաղթին...։ Մի կողմ թողեք անեծքն ավանդական, դրա փոխարեն օգնեցեք ժողովրդին ազատվելու իր կապանքներից։ Այս գաղափարն էր ընկած XVIII դարի գրական նոր շարժման գործիչների աշխարհայեցողության հիմքում։ XVIII դարի հոգևոր առաջավոր երգը, Պետրոս Նախիջևանցու կրոնական լավագույն երգերը ծառայում են այս գաղափարներին։ Նորը և առանձնահատուկը, որով բանաստեղծը տարբերվում է իր ժամանակակիցներից, այն է, որ նա, լինելով Դավիթ Անհաղթի ուսմունքի հետևողներից մեկը, XVIII դարի կրոնական բանաստեղծության մեջ, առավել քան շեշտակի, վերարծարծում է բանականության կարևոր դերը, մարդու կատարելության, աստվածանմանության խնդիրը՝ իբրև միջոցներից մեկը կյանքի ճանաչողության, հասարակական հարաբերությունների վերարտացոլման։ Նրա լավագույն երգերում, աղոթքներում ներքնապես իշխում են բանականությունը, միտքը, գաղափարը, հասարակական կյանքի շունչը։ Հոգևոր երգին հատուկ ավետարանական նյութին ու պատկերներին միահյուսվում են իրական, շոշափելի կյանքի նյութն ու պատկերները, սրբերի կերպարների, անունների հետ միասին նաև իրական մարդկանց պատկերները՝ մեծատան, տընանկի, աղքատի, շինականի, վարժապետի, աշակերտի, եկեղեցու առաջնորդի, վարդապետի, քահանայի, սարկավագի, դպրի...

Պետրոս Նախիջևանցին ձգտում է, որքան որ թույլ է տալիս կրոնական, եկեղեցական երգի բնույթը, ազգայնացնել, գաղափարայնացնել հոգևոր երգը, օժտել նրան ճանաչողական հատկությամբ, տալ նրան կենսական հույզ և թրթիռ։ Այս առումով XVIII դարի կրոնական բանաստեղծության մեջ բացառիկ օրինակներ են նրա «Աղօթական բանք ընդ աստուծոյ, ի խորոց սրտէ սրտաբեկ զղջմամբ, յատկապես կոչեցեալ Ապաշխարարան» մեծածավալ պոեմը, «Երգ ի տօնի զինաւորաց», «Հառաչանք առ անապատն յանդարտութեան», «Երգ առ անհուն բարին», «Ողբերգութիւն ի մահու մեծ վարդապետաց», «Երգ ասացեալ ի համբակութեան աղերսակերպ», «Երգ բարեկենդանին», «Յաւուր երաշտութեան», «Երգ աղերսախառն առ ի մուտ նոր տարւոյն», «Աղերս մեծատան», «Խրատ երիտասարդաց», «Յաւուր նեղութեան», «Երգ ձմեռնացեալ ծերոց առ ի զգաստանալ», «Խրատ մանկանց», «Ողբ ասելի ապաշխարող մեղաւորաց», «Զուգաւոտք, որոյ բանից և անցք աշխարհիս մերոյ արևելեան եղև զուգորդ» և այլ բանաստեղծություններ ու պոեմներ։ Սրանցում ևս իշխում են աղերսանքի, ապաշխարության, աղոթական մրմունջները, բայց ուժեղ է նաև կենսական զգացողությունը և, որ կարևոր է, քննադատական ոգին։ Բանաստեղծը առաջադրում է սխալները ուղղելու ելք, միջոց, բարոյապես վերափոխվելու գեղ ու դարման։ Երգիչը ամենայն ջերմեռանդությամբ ու կրքով բնությունից, երկնքից, աստծուց, մարդկանցից, ամե-

19 «Նոր տետրակ, որ կոչի Յորդորակ», Մադրաս, 1772, էջ 182։

Նուրեք խնդրում է՝ օգնել, վշտակցել խեղճին, աղքատին, զրկվածին։ «Երգ աղերսախառն ի մուտ Նոր տարւոյն» բանաստեղծությունը նոր տարվա ավանդական տոնին նվիրված մեզ հայտնի միակ երգն է անցյալից։ Երգիչը ընթերցողին է ներկայացնում ժողովրդի առողջ տրամադրությունը, նրա հավատը, հույսը նոր տարվա շեմին, նրա լավատեսությունը գալիքի նկատմամբ, զգուշացնում մարդկանց չկրկնել սխալները, անցյալ տարվա մեղքերը, ոգևորում, քաջալերում է նրանց նոր հեռանկարներով, մաղթում է լինել զգաստ և զգոն, առաջնորդվել բարությամբ, ճշմարտությամբ, մարդասիրությամբ...

Ի գալ տարւոյն հին կատարած,
Գոհանամ ես ալքէն, տե՛ր աստուած,
Առ ի լինել նոր զանգուած,
Սրբեա՞ ըզհին խմորն մեղաց։
Պայծառ հոգւոյս մեր նորակերտ,
Զզեցուցեր զնոր կապերտ,
Սև ագռաւոյն զաղտեղի ծերտ,
Մաքրե՛լ տուր մեզ ջուր արտասուաց։
Ետուր, գթած, մեզ Նոր տարի,
Բերցէ ընդ իւր մեզ բիւր բարի,
Ընդ նմին տէր, մեզ հի՛ւր արի,
Սրտի մեր դուռն է՝ արդ, քեզ բաց...
Ուրախութիւն մեզ այս մեծ տօն,
Տեառնէդ շնորհիւ լի և յարտօն,
Պա՛հեցէ զմեզ զգաստ և ըզգօն,
Ցսահել կրկին ի խոր մեղաց...
Է յաւիտեան լայնածաւալ,
Տարի անվերջ մշտաթաւալ,
Զանիւ կենաց մեր հոլովեալ,
Հասո՞ քոյին անճառ փառաց[20]։

Պետրոս Նախիջևանցու այդ երգերը բացահայտում են տնտեսական տարբեր կարողությունների մարդկանց հոգեկան աշխարհը, հայ շինականի նահապետական, պարզունակ բնավորության որոշ գծերը, նրա մշտական ցավերը, նրա հոգսերով լի առօրյան.

Ամէնողորմ գթած հայր մեր,
Լո՛ւր քաղցրութեամբ զաղաչանս մեր.
Քաղցրիկ զանձրև դու տո՛ւր մեզ, տէ՛ր,
Առնել զերկիր մեր պտղաբեր...
Ամենասուրբ երրորդութիւն,
Լո՛յծ յերկրէ մեր զերաշտութիւն,
Շնորհեա՞ զանձրևդ ի լիութիւն,
Բառնալ զսով և սղութիւն[21]։

Ուրիշ ինչ բանաստեղծություն կարող է այնպես ներկայացնել XVIII դարի հողի աշխատավորի մտահոգությունը, քան Նախիջևանցու հոգևոր երգարանի «Ցաւուր երաշտութեան» խորագրով այս երգը։ Անձրև, կենարար ջուր է աղերսում բանաստեղծը հայ գյուղացու անմեղ շուրթերով. ետ տար երաշտը,

20 Ձեռ. № 6744, էջ 103բ—104ա։
21 Նույն տեղում, էջ 122ա։

բարձիր սովն ու սղությունը («Շնորհեա զանձրևդ ի լիութիւն, բառնալ զսով և սղութիւն»), թախանձում է երգիչը երկնային թագավորին։ Պետրոս Նախիջևանցին բարձրացնում է նաև նոր ժամանակների հակամետ հասարակական, տնտեսական հարաբերությունների ծնունդ բարեգործության գաղափարը, որը նոր արմատներ է ձգում նաև հայ իրականության մեջ։ Բանաստեղծի հայացքով մահմեդական լծի տակ տառապող հայ աշխատավոր ժողովրդի կյանքի բեռը թեթևացնելու համար մեծատուններից շատ բան է կախված։ Ուստի մեծատունների գութը շարժելու նպատակով ժողովրդասեր երգիչը հորդորում է նրանց լինել բարեսիրտ, ողորմած, մարդասեր.

Ամենատէր և մեծանուն,
Որ արարէր զիս մեծատուն,
Տո՛ւր ինձ խորհիլ զանկեալս ի տուն,
Եւ զդեցօղս պատառոտուն։
Ի ծիրանեաց և բեհեզաց,
Զորս ստացայ ի քոյդ շնորհաց,
Հանե՛լ բաժին զէթ մինն ի յայնց.
Մերկ, անզգեստ, խեղճ աղքատաց[22]։

Նախիջևանցին ձգտում է բանականության հաղթանակին՝ քրիստոնեական ուսմունքի բարոյական չափերի գործադրությամբ։ Բանաստեղծը չի հովանավորում կույր, անշարժ, ինքնանպատակ կրոնական կոչումն ու հավատասիրությունը, հավատը պետք է նաև գործով զարդարվի։

Սուրբ զկոչում քո ի հաւատ
Բարեաց գործով արա հաստատ.
Քանզի հաւատն միայն չէ շատ,
Այլև գործով զարդարիլն է[23]։

«Յաւուր նեղութեան» աղերս-բանաստեղծությունը, որ երգվել է եկեղեցում, հայոց իրավաքաղաքական ծանր վիճակի դեմ ուղղված սրտառուչ մի բողոք է, բյուրավոր ցավերով պատած մի անմեղ ժողովրդի կյանքի տխուր քնարերգությունը.

Ամենախնամ տէ՛ր երկնաւոր.
Հայա՛ց ի յազգս անթագաւոր,
Պատեալ վշտօք հազարաւոր,
Յո՛չ ումեքէ նպաստաւոր...

Որպէս յղի ծրննդկան,
Երկունք պատեալ, պաշարեալ կան
Ո՛չ ոք ունիմք մեզ օգնական,
Աղաղակեմք ողորմական...[24]։

Նախիջևանցու քնարը միահույզ, միալար չէ, նրա վերոհիշյալ երգերը զգացողությունների և իմացությունների մի բարդ, հակասական ամբողջու-

22 Նույն տեղում, էջ 80ա—բ։
23 Ձեռ. 1991, էջ 207ա։
24 Ձեռ. № 6744, էջ 122ա—բ։

թյուն են։ Խորապես ապրելով իր դարը, միաժամանակ կրելով սուրբ հայրերի, հին հունական փիլիսոփայության, հատկապես Պլատոնի և Արիստոտելի և հայ ազգային գրականության, փիլիսոփայության մեծերի՝ Դավիթ Անհաղթի, Գրիգոր Նարեկացու և Ներսես Շնորհալու ազդեցությունը, հավատացյալ բանաստեղծը հանդես է գալիս մերթ իբրև հավատքի և հայրենիքի ծանրախոհ երգիչ, մերթ՝ պարզ խրատանքի, ուրախության ժողովրդաշուղական հանգի ու ոճի մի բանաստեղծ, մերթ՝ խռովահույզ, աշխարհամերժ մենակյաց մի կրոնավոր, մերթ՝ երկնային, մերթ՝ երկրային, մերթ՝ երազող, վերացած, մերթ՝ իրապաշտ, մերթ՝ խոր աստվածաբան, մերթ՝ ճշմարիտ փիլիսոփա, գեղագետ։ Սակայն հուսահատական դեգերումների, երկնային սավառնումների մեջ ևս Նախիջևանցին, այնուամենայնիվ, կապված է կյանքի հետ։ Միշտ դեպի երկինք, «դեպի անհուն բարին» թևածող երգչի սիրտը տրոփում է աշխարհի, մարդու, իր ժողովրդի կյանքի համար։ Բանաստեղծի այս տիպի երգերը կենսական-իմացական ներքին ազդու ուժ ունեն և բարձր են քնարական արվեստով, բանաստեղծական կատարելությամբ.

Երկնաքանդակ դու ապահով նաւահանգիստ գերաղանց,
Յոգնատրտուն, որք ի ծովու այսր աշխարհէն անցան.
Բաղձեա սիրտ իմ, թռչիլ յերամս քոյին մաքուր միանձացն.
Մոլորեալ եմ, ընկալ և զիս ի քո սուրբ ծոցդ անապատ։
Սուրբ աղօթօք մշտամրմունջ աղաւներամ քո պարուց,
Սիւն աշխարհի հաստատութեան՝ ազգիս, մանաւանդ, Հայոց,
Սիրտ իմ բաղձեա հաղորդակցիլ, ընտրեալ որդւոց քոց բարոց.
Մոլորեալ եմ, ընկալ և զիս ի քո սուրբ ծոցդ անապատ[25]։

Երկրային, իրական աշխարհը հեղձուցիչ է, նեղ՝ ծանրացած մեղքերի, անարդարության բեռների տակ. կյանքից ու աշխարհից դառնացած, ձանձրացած բանաստեղծը երազում է իր նախնիների, սուրբ հայրերի, գիտունների օրինակով քաշվել անապատ, հաղորդակցվել ընտրյալների հետ, որպեսզի անդուլ ճգնությամբ կարողանա հոգով, գործով մենամարտել չարի, ախոյանների դեմ.

Բամից չարեաց գտակ չարին յաղթել պէս-պէս փորձանաց,
Դու ես տեղի ախոյանից, հոգով մենամարտողաց,
Ուստի առ այս զէակիցն յիւր հոգին յանապատ վարեաց.
Մոլորեալ եմ, ընկալ և զիս ի քո սուրբ ծոցդ անապատ։
Ո՜ տայր ինձ զթէ աղաւնոյ, ըստ բաղձանաց ասողին,
Թռչիլ և դադրիլ ի քեզ, ընդ այնց, որք զաշխարհն թողին,
Զի ձանձրացայց և խռովեցայց զբազմանացս ըստ երգողին.
Մոլորեալ եմ, ընկալ և զիս ի քո սուրբ ծոցդ անապատ[26]։

Հաշտ հոգով մահվան ձգտում, հանդերձյալ կյանքի նկատմամբ ղդայական կամ իմացական մղում չէ սա և ոչ էլ սոսկ կրոնավորի ղջում, ապաշխարություն՝ բառի նեղ առումով, այլ՝ հավատացյալ բանական էակի խոր ընդվզում, արդար կռվի մեջ պարտված ու զրկված մի ժողովրդի ողբերգության ցավագին արձագանք։ Հուսահատությունը երևութականանում է իբրև կորստյան գաղափարի, անհաշտելիության ոգու արտահայտություն։ Չար և դաժան

25 Ձեռ. № 1991, էջ 100ա—բ։
26 Նույն տեղում, էջ 103ա։

«դարանակալ» թշնամին, այլաբանում է երգիչը, խավարաձիգ նետերով վայր է գլորել նրան գարերի բարձունքից, խափանել նրա երկրային թռիչքը։ Բանաստեղծը անհուն ատելությամբ լցված երազում է նոր թռիչք, աղերսում է երկնային թագավորին պարգևել հզոր թևեր՝ կորցրած բարձունքներին հասնելու համար.

Բամք որսորդաց դարան գործեալ վասն իմ թռչնոյս երկնագնաց,
Հարեալ նետիւք խաւարաձիգ ընկեցին զիս ի բարձանց, ի բարձանց,
Վա՜շ, թէ տայր տէրն իմ ոգեսէր հզօր ինձ թևս աղաւնեաց,
Զի առ եթերն իմ լուսաճէմ վերաթռուցէր թևն զիս, թևն զիս...
Երկրաւորիս սիրոյ տոռամբ[27] անմահ հոգւոյս մահաբեր,
Վայրաբերեալ պարաւանդիմ ի պատճառաց անտարբեր, անտարբեր.
Վա՜շ, թէ զարթեալ վերնոյն յիս կայծ շարժիցէր զիս զառիվեր,
Եւ ի կայանն իւր սեփական վերբերիցէր հրովն զիս, հրովն զիս[28]։

Անարդար պետք է լինել կարծելու համար, թե սրանք սոսկ հավատացյալի վերացական պստրանքներ են։ Իրականության դեմ սքեմավոր բանաստեղծի քաղաքացիական միտքն է բորբոքվում, ժամանակի շունչն է տակնուվրա անում երգչի հոգին։ Ժողովրդին, ազգին, եկեղեցուն անձնվիրաբար ծառայելու հարցն է Նախիջևանցու այս երգերի խորին խորհուրդը։ Եթե նույնիսկ հայրենի աշխարհը,— գրում է երգիչը,— ծագեիծագ լցվի ամենայն ինչքով, բարիքով, հարստությամբ, դարձյալ սպեղանի չեն կարող լինել երգչի խոցված սրտի համար կամ թեթևացնել նրա տառապանքները.

Տունս արամեան, լայնածաւալ լցեալ ինչիւք ծագ ընդ ծագ,
Թէ իցեմ, տէր, չէ՛ բաւական լնուլ բաղձանս իմ ցայգ, իմ ցայգ,
Ուրեմն, վաշ թէ՛ յանքոյթ կայանն վերբերիցէր արագ,
Զի հանգուցէր ի ծարաւոյ անհուն փառաց ծովն զիս, ծովն զիս[29]։

Հասարակայնորեն չիմաստավորված, անօգտակար, անօգուտ կյանքից ետ կանգնելու, սթափվելու, վերակերտվելու, մարդկային կյանքի կատարյալ ճանապարհ ընտրելու մեծ խորհուրդ ու պատգամ ունեն Նախիջևանցու այս բանաստեղծությունները։ «Երգ ձմեռնացեալ ծերոց առ ի զգաստանալ» բանաստեղծությունը ևս նման չէ կյանքի և մահվան շուրջը անցյալում հյուսված երգերին։ Նորակերտ քնարական մի կտավ է այն, որ ամեն մի ընթերցող բանական էակի կարող է խոսեցնել յուրովի. ամեն ոք խորունկ ցավ կարող է զգալ իր կորցրածի, իր չգտածի, իր մեղքերի, սխալների համար...

Իբրև արծիւ բարձրաթռիչ սրաթև,
Խոյանալով, սլանալով հրրաձև,
Այլ ամփոփեա՛, արդէն զթև քո ըզքև,
Որովհետև, ահա՛, ծերացար անձն իմ...
Էիր ստոյգ ի մանկութեան վարդ գարնան,
Եղիր ծաղկեալ և պտղալից յամառան,
Այլ թօթափեալ ի ժամ աշնան ծերութեան,
Իբրու ձմեռն ալեօք ձիւնացար, ա՜նձն իմ[30]։

---

27 Տոռն նշանակում է պարան, թոկ։
28 Ձեռ. № 6744, էջ 64բ, 65ա։
29 Նույն տեղում, էջ 65ա։
30 Նույն տեղում, էջ 108ա։

Պետրոս Նախիջևանցու այս երգերը օտար բռնակալների արշավանքների, ավերումների վերաբերյալ նախորդ դարերի ողբերի, պատմահայրենասիրական վերհուշերի խաղաղ, նկարագրական ոճը չունեն։ Հոգու և մարմնի, կյանքի և մահվան, մարդ բանականի և երկնայինի վեճերի ու խորհրդածությունների ներքին հյուսվածքից հաճախ ժայթքում է ըմբոստության, անհաշտության ոգին, աղոթական մրմունջներին ներքնապես միահյուսվում է պայքարի տենչը։ Այս առումով բացառիկ է Նախիջևանցու «Երգ ի տօնի զինաւորաց» բանաստեղծությունը։ Այստեղ երգիչը քրիստոնյա զորավարների նահատակների պայքարի օրինակով արձագանքում է ժամանակի հայոց ազգային-ազատագրական շարժմանը, դեպի մահ, դեպի կռվի դաշտ, դեպի հաղթանակ ընդդեմ չարի՝ հորդորում է բանաստեղծը.

Պարծանք համայն զինաւորաց՝ զօրագլուխ հաւատոյ,
Որ զինեցեր զինաւորս՝ զինու խաչին խորհրդոյ.
Զինեա՛ և զիս, զինաթափո՛ւրս զօրեղ այսու լինու քո,
Խոցել զգլուխ չար վիշապին զինու խաչին պարծանաց[31]։

Եթե մահմեդական բռնակալությունը սրով է ոչնչացնում քրիստոնյա հայերին, սրով հաստատում իր կրոնական իրավունքը, ապա տրամաբանական է, որ հայ ժողովրդասեր, հավատացյալ բանաստեղծը պետք է կոչ անի, որպեսզի քրիստոնյա հայ զինվորը ևս իր հավատքը զենքը դարձնի և այդ զենքով պաշտպանի իր կրոնն ու հայրենիքը։ Դժվար չէ նկատել, որ Պետրոս Նախիջևանցու այս հայացքը ի վերջո համախոս է Հովսեփ Էմինի վերևում հիշված ծրագրային առաջարկությանը, համաձայն որի՝ եթե հայ զինվորը իր զգեստանշանի վրա կրի քրիստոնեական խաչը և ընդդեմ թշնամու իր արյունը թափի նույն այդ խաչի ներքո, ապա կարելի կլինի հաղթել հայրենիքի անարդ թշնամիներին և ազատագրել հայրենի հողը։ Նախիջևանցին պատգամում է հայությանը զինվել նետ ու գեղարդով, հանկարծակի բերել թշնամուն, խոցել չար վիշապի գլուխը, նրա ոտքերին դնել պարտության սենապանը.

Եդիր ի գլուխս մտաց նոցին յուսոյդ վերին ոաղավարտ.
Զաղղել չարին յանկարծաձիգ նետ ու քարինք կամ գեղարդ.
Յուսով փառաց արքայութեան արա գլուխ իմ թագազարդ,
Որպէս Սարգիս սուրբ զօրապետ անսհ մարտիլ ընդ դիւաց...։
Մրոմեից նոցին զգեցուցեր խոնարութեան սենապան,
Յամէն չարին մեքենայից լինիլ նոցա պահապան.
Տո՛ր ինձ զայն զէն ընդդիմանալ խորախորհրդոց հպարտութեան,
Որով չարի պարանոցին ոտն իմ լիցի յարակաց[32]։

Մսեր Մսերյանցը, վերհիշելով Առաքել Դավրիժեցու հայոց պատմության Էջմիածնի ներքին կյանքին վերաբերող տխուր պատկերները («Էջմիածին... կային միայն միաբանք սակաւք և այնք ևս յոյժ տգէտք...», «Սևագլուխք, սինլիքորք...» և այլն), նկատում է, թե «բանք այսպիսիք յաճախ գտանին նաև ի գիրս Պետրոս եպիսկոպոսի Բարթուղիմեան»[33]։ Իրոք, ինչպես ակնարկեցինք վերևում, Նախիջևանցու թե՛ աստվածաբանական, գիտափիլիսոփայական և թե՛

31 Նույն տեղում, էջ 74ա—բ։
32 Նույն տեղում, էջ 74բ։
33. Մ ս ե ր Մ ս ե ր ե ա ն ց, Պատմութիւն կաթողիկոսաց Էջմիածնի, էջ 261։

բանաստեղծական մի շարք գործեր լի են պատմական ուշագրավ տեղեկություններով, հատկապես վերևում հիշված ողբերի մեջ ելգալի է հայ ժողովրդի և՛ անցյալի, և՛ նոր ժամանակի պատմաքաղաքական կյանքի շունչը։ Բանաստեղծի այսօրինակ երկերից առավել ուշագրավ են «Ողբերգութիւն ըստ ողբոցն Երեմիայի, յորում նախ յամառօտ յիշատակ անցիցն երկրին իւրեանց և զկնի ապաշաւ ի հոգւոյ» պոեմը, «Զուգաւոտք, որոց բանից և անցք արևելեան աշխարհիս եղեն զուգորդ» և «Ողբ ասելի ապաշխարող մեղաւորաց» բանաստեղծությունները։ Առաջինը Նախիջևանի 1740 թ. գրավմանը նվիրված մեզ հայտնի միակ պատմական երգն է, տխուր, դառն իրականության սրտառուչ մի արձագանք։ Ժողովրդասեր բանաստեղծը սրտի խորունկ ցավով է ներկայացնում այն տառապանքները, որ կրում են քաղաքի անդեն ու անպաշտպան բնակիչները՝ մանուկները, նորահարս կանայք ու աղջիկները։ Բանաստեղծը սգում է հայրենի քաղաքի անկումը. իբրև մի այրի, որդեկորույս մայր Նախիջևանը բարձրաձայն ողբում է իր օրհասական վախճանը՝ դիմառնության ծանոթ եղանակով.

Այլ ես գոլով մեղանչական,
Լցեալ ախտիւք կորստական,
Թողում ողբալ անօգնական
Քակեալ քաղաքն Նիւթական.
Այլ ձայն երգեմ աղերսական,
Ընդ քաղաքիս իմ անձնական,
Զբան տեսողիս ողբերգական,
Առ իս փոխեալ դիմառնական[34].

Սուր, հակադիր պատկերների, նկարագրությունների մեջ ընթերցողի առաջ վերակենդանանում է Նախիջևանը իր խաղաղ, անվրդով օրերի շինարար աշխատանքով ու կյանքով և ապա՝ բարբարոսների կրունկի տակ՝ ավերված, կիսաշունչ...

Քաղաք էի ես տիրական,
Լցեալ որդւովք հոգիական,
Հաւատարիմ ու պատուական,
Արդարութեան հանգստարան,
Բացի դրունս զգայութեան։
Հանդէպ զօրաց լեգէօնեան,
Հարբ և հոգւովն հանդերձ փեսայն
Զքաղաքս լքեալ յինէն զատան։
Եղէ քաղաք պոռնկութեան,
Լեալ հոմանւոյն ասպանչական,
Սպանողաց դիւոց կայան,
Զար մատնացքն օթարան[35]։

Երգիչը վերակենդանացնում է պատերազմական այն ցնցող իրականությունը, որի ականատեսը լինելու դժբախտությունն է ունեցել ինքը։ Ընթերցողը լսում է սրրկության դատապարտված անմեղ հայերի հառաչանքները, օգնության, աղերսանքի կսկծալի մրմունջները.

---

34 Ձեռ. № 6744, էջ 40ա։

35 Նույն տեղում, էջ 40ա—բ։

Ընդ խաւարին իշխանութեան
Նստիմ ի մէջ ծառայութեան,
Ազատարար որդւոց մանկան,
Դարձո 'ի կեանս ազատութեան։
Ներ թշնամեաց եմ նախատման,
Հալածիչք իմ հանգիստ ոչ տան,
Հանգստարար մերոց յոգւոց,
Հանգո՛ ի քեզ զիմ խղճմտանս[36]։

Թշնամին ոտնակոխ է անում մարդկային բարոյականության բոլոր սահմանները, պղծում է հայրենի սրբությունները, տրորում անմեղ կանանց ու աղջիկների պատիվը։ Ինչպե՛ս պատահեց այս բոլորը, ինչպե՛ս թույլ գտնվեցինք փակելու մեր զգայության դռները, ինչպե՛ս չկարողացանք կանխել չար թշնամու երթը, ինչպե՛ս թույլ տվեցինք մեր աշխատանքի արդար վաստակը ավար դարձնելու թշնամուն,— դառնացած հառաչում է բանաստեղծը.

Զի՞արդ շլացաւ ոսկին պայծառ,
Ոսկիաթագ հոգիս կայտառ.
Այլագունեալ սպիտակ արծաթս
Զիա՞րդ պատեաց զինև խաւար։
Զի՞արդ յղկեալ ակունքս գոհար
Սպառեցան յանցս ընդ ճանապարհ,
Ստացուածոց բարեաց գումար
Զար թշնամւոյ եղեն յաւար։
Պատուականօք իմ որդւոց գուպար,
Զինև սփռեալ ականաշար,
Զի՞արդ հանգոյն խեցեաց բեկան,
Գործոցն բիրտ նմանաբար[37]։

Բանաստեղծը մեկ առ մեկ ներկայացնում է Թահմազ բռնակալի և նրա հրոսակախմբերի գազանային արարքները, հայ անմեղ կույսերի, մանուկների, հարսների նկատմամբ նրանց գործադրած զարհուրելի, հրեշավոր սանձարձակությունները։

Մերկացուցին վիշապապար,
Զստինս իւրեանց հարսանց ի պար,
Դիացուցին կորիւնս իւրեանց,
Ստիպման հարկին լեալ անպատկառ։
Ի դստէրացս գեղանկար
Բժշկութիւն փախեաւ ի տար,
Տառապանօք, ջայլամաբար,
Յանապատին շրջին ի թափառ։
Մինչ քաղց, ծարաւքն սաստկանայր.
Խումբ դիեցիկ մանկանց ի լայր,
Զի խնդրէին զհաց և ջուր,
Եւ ոչ ոք էր, որ նոցա տայր[38]։

Պետրոս Նախիջևանցու այս պոեմը հայ ժողովրդի նոր ժամանակների ահեղ օրերի ողբն է, նրա ազգային խորունկ ցավերի ճշմարտապատում արտա-

36 Նույն տեղում, էջ 51ա։
37 Նույն տեղում, էջ 52ա—բ։
38 Նույն տեղում։

հայտությունը։ Այս երգերը բերում են վշտի մի զգացողություն, ազգային թախծի մի շնչտ, որ հատուկ են նոր ժամանակների բանաստեղծությանը։ Կյանքի անարգարությունները, հայրենի երկրի, եկեղեցու թշվառությունը, շարունակվող անկումը և միաժամանակ անցած փառքը, երանելի օրերի հուշերը փոթորկում, տակն ու վրա են անում ազգասեր բանաստեղծի հոգին։ Նա ելք է որոնում իր ժողովրդին այդ վիճակից դուրս բերելու համար և, մի հետադարձ հայացք նետելով անցյալին, ոգեշնչված Նարեկացու հանճարեղ «Մատեանով», գրում է Ողբերգության մի նոր մատյան XVIII դարի հայ հավատացյալ մտավորականի Ողբերգության մատյանը։

ПЕТРОС НАХИДЖЕВАНЦИ И ОБНОВЛЕННАЯ АРМЯНСКАЯ ДУХОВНАЯ ПЕСНЯ XVIII ВЕКА

Доктор филол. наук Ш. Л. НАЗАРЯН

(Резюме)

Перу Петроса Нахиджеванци принадлежит около двух десятков томов, большинство которых еще не опубликовано. В них затрагиваются различные вопросы, которые обогащают наши представления об истории армянского народа, армянской церкви XVIII века, о развитии армянской философской мысли, истории педагогики, музыки и особенно о поэзии. В данной работе сделана попытка представить Петроса Нахиджеванци как одного из значительных поэтов, принадлежащих к армянской национально-религиозной поэзии XVIII века. Он является автором около 300 больших и малых лирических произведений—поэм, стихотворений, четверостиший, афоризмов и др. П. Нахиджеванци стремится, насколько это позволяет специфика религиозной, церковной песни, придать духовной песне познавательный характер, жизненность.